



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԽՈՐՀՈՒՐԴ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ»
ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀԱՏՈՒԿ ԴԻՄՈՐԴՆԵՐԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ
ՀԱՄԱՐ ԱՌԱՋԱՐԿ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի (**այսուհետ՝ Պալատ**) խորհուրդը, մասնակցությամբ Պալատի խորհրդի նախագահ Արա Զոհրաբյանի, խորհրդի անդամներ՝ Ալեքսանդր Սիրունյանի, Երվանդ Վարոսյանի, Լիպարիտ Սիմոնյանի, Կարեն Մեծլումյանի, Մարտուն Փանոսյանի, Մելանյա Առուստամյանի, Նելլի Հարությունյանի, Սիմոն Բաբայանի և Տիգրան Խուրշուդյանի,

քննության առնելով «Հայաստանի Հանրապետության փաստաբանական դպրոց» հիմնադրամում (**այսուհետ՝ Փաստաբանական դպրոց**) հատուկ դիմորդների 2015 թվականի ընդունելության նպատակով որոշում կայացնելու համար Փաստաբանական դպրոցի կառավարման խորհրդին (հոգաբարձուների խորհուրդ) առաջարկ ներկայացնելու հարցը,

դեկավարվելով «Փաստաբանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 5-րդ մասի և Փաստաբանական դպրոցի կանոնադրության 10.7 կետի պահանջներով,

Ո Ր Ո Շ Ե Ց՝

- առաջարկել «Հայաստանի Հանրապետության փաստաբանական դպրոց» հիմնադրամին 2015 թվականի համար անցկացնել հատուկ դիմորդների ընդունելություն:

Հայաստանի Հանրապետության
փաստաբանների պալատի
խորհրդի նախագահ՝

Արա Զոհրաբյան

25 մայիսի 2015թ.
թիվ 15/4-Լ
ք. Երևան